

Թողարկման վերջնական պայմաններ

08.02.2024թ.

Ամերիաբանկ ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել Ծրագրային ազդագիրը (գրանցված է 08 փետրվար 2024թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ-ում 2 Վ. Սարգսյան փողոց, 0010, Երևան, ՀՀ հասցեում:

| | | |
|---|---|---|
| Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:) | | |
| 1. | Թողարկողը (թողարկողի անվանումը) | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| 2. | Երաշխավորողը | Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավորող: |
| 3. | Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը) | Սերիա 3, 2024 |
| 4. | Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը | 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար |
| 5. | Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության | Պարտատոմսերը ստորադաս չեն: Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարման հերթականության մասին տեղեկատվությունը մանրակրկիտ ներկայացված է Ծրագրային ազդագրի 3.3.6 մասում/կետում: Ծրագրային ազդագրին կարելի է ծանոթանալ «Ամերիբանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.ameribank.am |
| 6. | Թողարկման արժույթը | ԱՄՆ դոլար |
| 7. | Առաջարկի գինը | Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝ |

| | | |
|-----|---|--|
| | | $DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ <p>որտեղ՝</p> $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (4- եռամսյակային վճարումների համար), N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, Y - մինչև մարում եկամտաբերություն:</p> <p>Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում</p> |
| 8. | Անվանական արժեքը | 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար |
| 9. | Քանակը | 150,000 (հարյուր հիսուն հազար) հատ |
| 10. | Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները) | 2024թ. փետրվարի 15 |
| 11. | Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները) | 2024թ. ապրիլի 26 Ընդ որում, եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է հանդիսանում այն օրը, երբ վաճառվել է վերջին պարտատոմսը: |
| 12. | Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր | [] |
| 13. | Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի») | «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի 2024թ հունվարի 16-ի թիվ 00-1/24/01 և 2024թ. հունվարի 26-ի թիվ 00-2/24/01 որոշումները և «Ամերիաբանկ» |

| | | |
|---|--|--|
| | | ՓԲԸ Տնօրինության 2024թ. փետրվարի 8-ի թիվ 01/22/24 որոշում |
| Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ | | |
| 14. | Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը | 2024թ. փետրվարի 15 |
| 15. | Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն | 5% (հինգ տոկոս) անվանական տոկոսադրույք և 3 (երեք) ամիս վճարման պարբերականությամբ |
| 16. | Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի) | 15.05.24 15.08.24 15.11.24 15.02.25 15.05.25 15.08.25 15.11.25 15.02.26 15.05.26 15.08.26 15.11.26 15.02.27 Արժեկտրոնի վճարումները կատարվում են արժեկտրոնի հաշվարկման օրերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային օր է. նման դեպքում արժեկտրոնը վճարվում է արժեկտրոնի հաշվարկման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: |
| 17. | Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն) | Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual) |
| 18. | Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը | ոչ կիրառելի |
| 19. | Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ | Վճարվող արժեկտրոնի մեծությունը որոշվում է տարեկան արժեկտրոնի մեծությունը բաժանելով տարվա ընթացքում արժեկտրոնների վճարման հաճախականության վրա: |
| 20. | Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | ոչ կիրառելի |
| Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ | | |
| 21. | Մարման ժամկետը | 2027թ. փետրվարի 15 Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/ |

| | | |
|---|--|---|
| | | անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը: |
| 22. | Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը | 100 (մեկ հարյուր) դոլար |
| 23. | Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն) | ոչ կիրառելի |
| 24. | Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | ոչ կիրառելի |
| | 1) Ժամկետ(ներ)ը | |
| | 2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում), | |
| | 3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը | |
| | 4) Այլ տեղեկություններ | |
| 25. | Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փուֆ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | ոչ կիրառելի |
| | 1) Ժամկետ(ներ)ը | |
| | 2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում), | |
| | 3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը) | |
| Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ | | |
| 26. | Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ 2 Վ. Սարգսյան փողոց, 0010, Երևան, ՀՀ |
| 27. | Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում) | |
| Այլ տեղեկություններ | | |
| 28. | Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը) | Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրի |
| 29. | Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում)) | Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակելու համար, ընդ որում առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել: Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է |

| | | |
|-----|--|--|
| | | իրականացվել միայն կարգավորվող շուկայում: |
| 30. | Արժեթղթի վարկանիշը | Արժեթղթերը վարկանշված չեն |
| 31. | Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը | <p>Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված 1570043100494501 հատուկ հաշվեհամարին:</p> <p>Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողը վճարումը պետք է կատարի մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ավարտը՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով:</p> <p>Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:</p> |